Հայտարարություն

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ութերորդ և իններորդ թողարկման պարտատոմսերի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակման վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ 2019 թվականի դեկտեմբերի 11-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ութերորդ և իններորդ թողարկման անվանական արժեկտրոնային դոլարային և դրամային պարտատոմսերը ցուցակվեցին «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում: Դոլարային պարտատոմսերը ընդգրկվել են պարտատոմսերի երկրորդային Bbond ցուցակում, իսկ դրամային պարտատոմսերը թույլատրվել են առևտրին պարտատոմսերի ազատ Cbond շուկայում: Որպես պարտատոմսերի շուկա ստեղծող (market maker) հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ ներդրումային ընկերությունը:

Ընկերության ութերորդ թողարկման՝ 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ ընդհանուր ծավալով, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 2 տարի մարման ժամկետով, արժեկտրոնի 6.5% եկամտաբերությամբ պարտատոմսերը շրջանառվելու են Բորսայում GLBLB8 հապավմամբ, ինչպես նաև թույլատրվելու է հասցեական և ռեպո գործարքների կնքումը:

Ընկերության ութերորդ թողարկման՝ 500 000 000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 1 տարի մարման ժամկետով, արժեկտրոնի 9% եկամտաբերությամբ պարտատոմսերը շրջանառվելու են Բորսայում GLBLB9 հապավմամբ, ինչպես նաև թույլատրվելու է հասցեական և ռեպո գործարքների կնքումը:

Հիշեցնենք, որ սույն թվականի նոյեմբերի 28-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի դրամային պարտատոմսերը հաջողությամբ տեղաբաշխվել են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով:

Ութերորդ թողարկման դոլարային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 1,772,798.9 ԱՄՆ դոլար (177%), իսկ իններորդ թողարկման դրամային պարտատոմսերինը՝ 677,125,000 ՀՀ դրամ (135%): Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, որի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 1,000,032.2 ԱՄՆ դոլար և 500,046,850 ՀՀ դրամ: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը/եկամտաբերությունը դոլարային արժեթղթերի համար եղել է 100 ԱՄՆ դոլար/6.5%, իսկ դրամային պարտատոմսերինը՝ 10,000 ՀՀ դրամ/9%: Պարտատոմսերի տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը դոլարային ութերորդ թողարկման համար եղել է 6.4983%, իսկ դրամային իններորդ թողարկման համար՝ 8.99%: